



2010ի Մարդահամարին Նուիրում ձուլաբ Պըրպէնֆի Մէջ

FOR IMMEDIATE RELEASE
DECEMBER 3, 2009

Contact-Silva Kechichian
818/445-0704

ՊՐՊԷՆՔ.- Նշելով դաշնակցային կառավարութեանը իւրաքանչիւր համայնքին տրամադրուելիք օժանդակութեանց մէջ մարդահամարի տուեալներուն դերը, ինչպէս նաեւ 2010ի մարդահամարին իրականացման համար աշխատանքի կարելիութիւնները, Պըրպէնֆի Հայ Դատի յանձնախումբի ատենապետ Կարէն Եղբայրեան կը յայտնէ, թէ Պըրպէնֆի հայութեան մասնակցութիւնը յոյժ կարեւոր է Միացեալ Նահանգներու 2010ի մարդահամարին նուիրում եւ Շարքթ, Դեկտեմբեր 12ին կայանալիք հաւաքին:

Հաւաքը տեղի պիտի ունենայ կ.ե. Ժամը 2-4, «Օվրում» գրաստան-համայնքային կեդրոնին մէջ (601 South San Fernando Boulevard, Burbank):

Ներկաները տեղեկութիւններ պիտի ստանան մարդահամարին համար աշխատելու կարելիութիւններուն մասին: Պիտի բացատրուի, թէ ինչո՞ւ համար յոյժ կարեւոր է, որ Միացեալ Նահանգներու մէջ ապրող իւրաքանչիւր հայ նկատի առնուի պետութեան կողմէ:

Ըստ Միացեալ Նահանգներու սահմանադրութեան, 10 տարին անգամ մը մարդահամար պէտք է կատարուի, եւ անոր արդիւնքներուն հիման վրայ է որ բաղաձայնները իրենց բաժին ինկած դաշնակցային գումարները կը ստանան:

Ելոյթներ պիտի ունենան Պըրպէնֆի Հայ Դատի յանձնախումբի ատենապետ Կարէն Եղբայրեան, Արեւմտեան Ամերիկայի Հայ Դատի յանձնախումբի համայնքային յարաբերութեանց վարիչ Հայկ Յովսէփեան, եւ Պըրպէնֆի «Complete-Count» կազմակերպութեանը նախալի Օզկուտ:

Տեղի պիտի ունենայ հիւրասիրութիւն: Յաւելեալ տեղեկութեանց համար դիմել (818) 562-1918 թիւին:

